ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2026թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասի 12-րդ փողոցն (զուգահեռ է Սիլիկյան 11-րդ փողոցին) անվանակոչել մաթեմատիկոս, աստղագետ, պատմաբան, փիլիսոփա Անանիա Շիրակացու անվամբ՝ «Անանիա Շիրակացու փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ՀԱՅԿ ՄԻՐԶՈՅԱՆ**

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ՀԵՂԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ**

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ՆԱՏԱԼՅԱ ՍԻՆՈՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սիլիկյան 12-րդ փողոցը հանդիսանում է ներկայումս Երևան համայնքից, մասնավորապես Աջափնյակ վարչական շրջանից նախատեսվող «Ակադեմիական քաղաք» տանող միակ գլխավոր ճանապարհը: Այս հանգամանքը տալիս է նշված փողոցին բացառիկ խորհրդանշական նշանակություն՝ այն ոչ միայն ֆիզիկական կապող հանգույց է կրթության, գիտության և նորարարության կենտրոնի հետ, այլև Հայաստանի գիտական ու մշակութային ժառանգության հետ հոգևոր ու մտավոր կապ ստեղծող կարևոր հատված:

Անանիա Շիրակացին (610–685թթ.) եղել է միջնադարի հայ խոշորագույն գիտնականներից մեկը: Նա ծավալել է գիտական գործունեություն աստղագիտության, մաթեմատիկայի, տոմարագիտության, աշխարհագրության և փիլիսոփայության ոլորտներում, մշակել է սեփական իմաստասիրական համակարգ, ստեղծել լուսնային խավարումների և աստղագիտական երևույթների 19-ամյա պարբերաշրջանի աղյուսակներ, կազմել թվաբանության և ձայնագիտության բնագավառների դասագրքեր, թողել արժեքավոր բազում աշխատություններ:

Սիլիկյան 12-րդ փողոցի անվանակոչումը Անանիա Շիրակացու անվամբ ունի համազգային կարևորություն, քանի որ

1. Պատահական չէ, այլ խորհրդանշական ընտրություն է՝ փողոցը միավորում է ներկայիս քաղաքը և կրթության ապագա կենտրոնը՝ Ակադեմիական քաղաքը, ինչպես Անանիա Շիրակացին միավորել է գիտական փորձն ու ուսուցումը իր ժամանակում:

2. Հարգանքի և հիշատակության վկայություն է հայ գիտական մտքի հզոր ու նորարարական ավանդին, ինչը հատկապես կարևոր է կրթության ու գիտության կենտրոնի մուտքի համար:

3. Համակցված միջավայր: Սիլիկյան 12-րդ փողոցի հարևանությամբ արդեն գտնվում են Սահակ Պարթևի և Մխիթար Սեբաստացու փողոցները, իսկ մեկ այլ փողոց էլ առաջարկվում է անվանակոչել Գրիգոր Տաթևացու անվամբ: Սա ստեղծում է համաչափ, գիտական և մշակութային արժեքներով հարուստ փողոցային միջավայր, որը խորհրդանշում է հայկական մտքի և կրթության անընդմեջ շարունակությունը:

4. Հանրային և հոգևոր ազդեցություն: Ուսանողներն ու գիտնականները, օգտագործելով այդ փողոցը, անմիջապես կզգան ազգային գիտական ժառանգության հետ իրենց մտավոր ու հոգևոր կապը:

Այսպիսով, Սիլիկյան 12-րդ փողոցը անվանակոչելով «Անանիա Շիրակացու փողոց», մենք ոչ միայն հարգում ենք մեր մեծագույն գիտնականի հիշատակը, այլև ստեղծում ենք խորհրդանշական, մտավոր ու հոգևոր ուղի դեպի Հայաստանի գիտության և կրթության նոր սերնդի կենտրոն:

Հիմք ընդունելով վերոնշյալը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 17-րդ կետը՝ առաջարկվում է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասի 12-րդ փողոցն անվանակոչել հայ գիտական մտքի հենասյուններից մեկի՝ պատմաբան, աստղագետ, մաթեմատիկոս Անանիա Շիրակացու անվամբ՝ «Անանիա Շիրակացու փողոց»:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ՀԱՅԿ ՄԻՐԶՈՅԱՆ**

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ՀԵՂԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ**

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ **ՆԱՏԱԼՅԱ ՍԻՆՈՐՅԱՆ**